



# ԲԱԳՐԱՄԱՆ

ՕՐԱԳԻՐ

ԲԱՐՈՅԵՐԵ, ԲԱՆԸՆԴՐԵՐԵ  
ՏԵՏԵՄԵՐԵ, ԵՒ ԲԵՐԵՐԵ

ԳԻՏԵԼԵԱՑ

Թ. ՏԱՐԻ ԹԻՒ 1.

1851

ՅՈՒՆՈՒԱՐԻ 1.

ԵՐԵՀԱԶԱՐԵԱԿ ԱՐԵԱՆՈՒՆԵԱՑ

“ Ի Հայոցին մեծագոյն և ի Պարսկան զԱրշակունիաց  
,, տոհմ , որ և յԱրքահամեկ սերեցան ասու : ”

Ս. Գ. ԼՈՒՍԱԿՈՐԵ



Ա նձեւ աւ տարւոյն սկիզբը Յօթելինի վրայ խօսելով՝ յիշեցինք որ մեծա-  
մեծ դիպուածներու յիշատակն ալ որոշեալ չափով տարիներու շրջանէ  
մը վերջ յոթելեան կ'ըսուի . ասոնցմէ՝ աւելի երեւլիներուն հարիւրդարեան  
կամ հազարդարեան , այսինքն հարիւրերորդ կամ հազարերորդ տարեդարձը  
մեծահանդէս կը կատարեն բարեկիրթ և բարեզգած անձննք , եթէ քաղա-  
քական ըլլայ դիպուածն , եթէ եկեղեցական և եթէ առանձին ընկերութեան :  
Վ այսպէս անցեալ վերջնթեր տարին մեր Վիսիթարեան միաբանութիւնը իր  
աստուածիմաստ և երանաշնորհ հեղինակին երջանիկ առ Վստուած փոխման  
անմահախառն յիշատակը կատարեց և ծանոյց ազգայնոց ալ : Վոյն տարին բոլոր

Դարմանիա տօնեց իր Աթէ մեծ քանաստեղծին ծննդեան առաջին գարը . ( 1749 . օգոստ . 28 ) : «Իհէ տարի առաջ Պատուա քաղաքը գտուեցանք՝ երբ անոր Շնուսաբանական պարտիզին հաստատութեան և նոյն տարին տնկուած մեծ ծառի մը իրեք հարիւրերորդ տարեղարձը հանդիսիւ կատարեցին : 1845 ին Եւրոպայի բարեպաշտ հաւատացեալը մեծ տօնախմբութեամբ կատարեցին Դարենդոյ քաղաքը հսն եղած ( 1545 ) Տրիդենտեան ընդհանուր ժողովին չորրորդ գարամուտը : Ուուսք ալ հրատարակեցին հանդէս յիշատակի կատարել իրենց Ռիւրիք առաջին իշխանին և թագաւորին տիրապետութեան հազարամեան տարեդարձին՝ որ կը հանդիպի ՚ի 1862 :

Այս տարի Հայաստանի հայրենական ոգին՝ անոր աւերակ և կանգուն շինուածքներուն միջն ամբաւնալու՝ Արշակունեան մեծ և աշխարհաքարող ցեղին սկզբնաւորութեան երկու հազարերորդ փառաւոր յոթելեանը կատարելու հրաւեր կու տայ իր հին ազգին նոր և վառ մնացած սրտերուն . այն ճշմարիտ և առաքինի ազգասիրաց՝ որոնք աշխարհքիս ներկայ և անցեալ, ընտանի և օտար դիպուածոց և փոփոխութեանց մէջ ալ՝ մարդկային սրտին ընութեանն յարմար և Կատումէ ալ օրհնած ստոյգ և անսարատ հայրենեաց իմաստը և սէրը անանց պահեր են ծոցերնին . այն սէրը, այն իմաստը՝ որ մահուան պէս զօրաւոր և մահուան ալ յաղթող է, և իր կրակը որչափ ցուրտ մնիրով ալ ծածկուի՝ իր ծածուկ ջերմութեամբը յաջորդաց սրտերուն մէջ կը բորբռի դարէ դար : Այս, եթէ յետ երկնաւոր ամենասուրբ սիրոյն՝ երկրիս վրայ կոթընելու բան մը կայ՝ որ զմարդուս սիրտն վայրաքարշ կամ վայրախառն կրքերէ հեռու պահէ, քարձրացընէ, վսեմացընէ, միայն հայրենեաց սէրն է . թէ որ երկրաւոր կրից մէջ կայ կիրք մը որ ցածութիւն մը չունենայ, ամաչելու կամ տկար կողմ մ'ալ չունենայ՝ անիկայ հայրենասիրութեան ազնիւ կիրքն է . որ կամ ներկայ դիպուածներով կամ անցելոց յիշատակաւ՝ ըլլայ ուրախական ըլլայ տիրական՝ միշտ հաջոյ, վսեմական, գերագոյն զգացմունք մը կու տայ, և ազգմննք մը ազնուական մտածմանց և գործոց այն սրտերու՝ որ իրենց բարեզգած բնութիւնը աւրած չըլլան կամ թանձր և անարդ կրքով մը, կամ տմարդի ատելութեամք մը : Այսպիսեաց համար չես դու, ովքաղցը և փափուկ իմաստ հայրենեաց, և մանաւանդ Հայաստան հայրենեաց, զոր Կատուած նախ քան զամենայն աշխարհ ընտրեց, և երկնքէ ետև իր փառքն ու զօրութիւնն հոն յայտնեց :

Կզգերնուս այսօրուան քաղաքական վիճակին տարբերութիւնը արգելք մը չէ առաքինի սրտից և զգօն մտայ՝ անցեալ երանութեանց և փառաց յիշատակներն կատարելու . եթէ չի կրնար մեծափափագ սիրտը անսանկ մեծ փառք մը արժանաւոր մեծութեամք քաղաքաժողով հանդիսիւ, թնդմամբ և դոփմամբ կատարել, բայց բարեզգած սիրտ և խոհեմ միտք հայրենասիրաց՝ Ճարտար են վայելու և հանդարտ հանդէմներ կատարելու . երբոր այս սրտերն և մոքերն միաթանին՝ առատ ձեռքն ալ անգործ չի մնար . կը յիշուի այն քարէ սիւնը որուն վրայ Ապարշակ Հայոց Արշակունեաց նախահայրն՝ Հայոց պատմութեան սկիզբն դրումեց, և նոր սիւն մը կը կանգնուի՝ անոր անուան և իր ցեղին փառաց . կամ Ճարտար բաղուկ մը ապառաժ անձեւ քար մը կոփելով՝ մարդու կերպարանք կու տայ, և ցուրտ մարմարիոնէն սրտեր վառող Արշակունի թագաւոր մը կ'ելլայ երկան թագովը և գանգուր մազերովը . կամ կոշտ քարեր իրարու քով շարուելով հիմն կ'ըլլան Հայկական յիշատակաց թանգարանի մը կամ համալսարանի ուսմանց . կամ մեծատարած կտաւի մը վրայ Ճկուն ձեռքով գոյնզգոյն վրձին մը շարժելով կենդանատիպ պատկեր մը կը նկարուի, երկու հազար տարին ետ կը դառնայ, ամենքը կը զմայլին Արշակունեաց Հայաստան գալուն և Ապարշակայ քարեկարգութեանց անսարանաւ . կամ հողոտ համբերու կտորուանք ձուլած ու կոկած

միտաներ կ'ըլլան Արշակունեաց յիշատակաւ մը , և արժանաւոր ազգայնոց և ւսումնարանաց կը նուիրուին . կամ բանափրական կաճառներ , ատենական ներտղներ , քերդողական երգեր , երաժշտական ձայներ , հանձնարամբցիկ պարգևներ՝ յը հոչակեն այս երկհազարեան յիշատակը . և կամ սուրբ հաւատոց պատկառելի վեհութիւնն ալ կը հրաւիրուի՝ սուրբ Արշակունի թագաւորաց և հայրապետաց տօները , ինչպէս են Արգար , Անդուխտ , Տրդատ , Կրիգոր և իրեն Արդիքը . մեծահանդէս կատարելու , և երկրաւոր փառաց հետ երկնաւորին յիշատակն ալ իսառնելով՝ մեզի հետ զանմահ բարերար զամենասուրբ Արշակունի թագաւորութիւն ալ զուարձացընելու : Անաւանդ անոնք որ բաղդ ունին՝ այն մեծամեծ անձանց բնակած և պտրտած տեղերը բնակելու և պտրտելու , որչափ աւելի պիտի յորդորուին այսպիսի յիշատակաց . Ածբնեցին պիտի յիշէ և քննէ՝ Հայկազանց տէրութենէն վերջ նախ իր քաղքին մէջ Ա պղարշակայ ձեռքով նոր տէրութեան մ'ալ կանգնին , և անոր պքանչելի բարեկարգութիւններն , որոնց օրէնքը այն քաղքին կ'ելլար և կ'երթար բոլոր Հայաստան երջանկացընելու . սուր աչք մը հոն պիտի միտուէ նաև Անաւորուկ մեծասիրու և առատաձեռն թագաւորին վերջին ստակն՝ որ իր արձանին ձեռքն դրաւ՝ նշանակելով թէ բոլոր գանձը պարպեց այն քաղաքը շենցընելու համար . Դդեսացին ջերմեւանդութեամբ պիտի երկրպագէ Արգարու հետ անոր թղթակից և արարիչ Արտուր Պրիստոսի սուրբ դաստառակին . Տիգրանակերտցին՝ Ամրայ խրոխտ և սե սե աշտարակներուն մէջ զեռ գոռոզ Տիգրանայ և քաջին Ահճրդատայ մեծագործութիւններն պիտի որոնէ . Արզընկացին ահա մէկ մը Անահտայ տօները կը յիշէ Կայլ գետին վրայ նայելով Տրդատայ զՀայաստան Պարսից ձեռքէն ազատելու եկած ատեն , մէկ մ'ալ Առուող որչայ նահատակութիւններն կը տեսնէ . Լամախսեցին հոն թաղուած Արշակունի թագաւորներուն մնացեալ գերեզմանաց վրայ երթայ երկիւզախառն լուութեամբ մը արտասուաց հարկ մը տալու . ինչ ըսենք Ա պղարշապատեցւոյն՝ որ Կյուրովու և Տրդատայ , Պրիգորի և Ահակայ յիշատակաց մէջ կը նստի . Արշակերտցին իր զեղեցիկ բլուրներուն վրայ Ա պղարշայ և Արտաշիսի որդւոց ամանորաբեր տօներուն զուարթութիւնը նորոգուած պիտի տեսնէ : . . . Ինչու մէկմէկ յիշենք , ով որ հայրենի հողուն վրայ է և ունի սիրտ հայրենի՝ հոն կը գտնէ իր նախնեաց պանծալի յիշատակ մը :

Արդուս միրտը յիշատակով կը ննանի . առանց յիշատակի կեանքը անապատէն աւելի անապատ է . թէ որ նախնեաց նախանձը և աղապայից յոյսը ըբաներ մարդուս սրտին մէջ՝ երկրիս վրայ խիստ քիչ աւագինի և պիտանի մարդիկ կ'ըլլային . և ոչ երկնից Ճամբան այնչափ բանուեկ կ'ըլլար՝ թէ որ եկեղեցին ալ իր սուրբ յիշատակներն իր տօներն չաստատեր . Անոր համար յետ սրբազն տօնախմբութեանց՝ օգտակար և փափագելի կը սեպեմք ազգային քաղաքական դիպուածոց յիշատակին . վասն զի նա և երբոր մէկն ստոյգ իմաստափրութեամբ մտածէ ազգաց և աշխարհաց դիպուածներուն վրայ , ոչ ապաքէն կը տեսնէ Արկնաւորին մատը՝ որ ծածուկ կը լարէ և կ'ուղղէ մարդկան բաղզը զանազան կերպով և իննամբով . որով կը յանդիմանին այն պաղ և անտարբեր սրտերն՝ որ ծանծաղ մտածութեամբ տղայական կամ թեթե բաներ կը սեպեն այսպիսի յիշատակները . մանաւանդ այս հիմակուան յիշատակ՝ ուր Աստուծոյ մեր ազգին վրայ ցըցուցած եղական ինամբներէն մէկը կ'երեայ : Արովչետե Արշակունեաց ցեղը իր առաջին հաւատարիմ պաշտողէն՝ հաւատացելոց հօրմէն՝ Արքահամայ հանեց և ազգերնուս պարգևեց , և դարձեալ անոնցմէ հանեց մեր նոր հաւատոց հայրն ալ Հիրուդուրուս Առաստորոշն , որ և աստուածաշարժ բերնովն և զրչովն վկայեց իր Հաճախապատում վարդապետութեանց մէջ , թէ “ Ա հայս ոչինչ մեծագոյն և ’ի Պարս քան զԱրշակունեաց տոհմ՝ որ և յԱրքահամէ սերեցան աստ . . . ”

Եթէ Կարիգորն այն | ուստուրիչ՝ այսպէս պատուելի և մեծ կը ցուցընէր | Աշա-  
կունեաց անոնը, ով իրեն որդիքներէն պիտի համարձակի պղտի սեպել . . . | յակ  
մենք որ կրկին յարգող ենք | Կտուժոյ կարգաւորութեանց՝ թէ առանձինն մտա-  
ծելով և թէ իր ազգերնուս վրայ ըրած տնտեսութիւնը քննելով, կրկին ալ պարտք  
մը կը սեպեմք հոս՝ թէ իրեն երախտագիտութեան համար, և թէ մեր կողմանէ  
ալ | Աշակունեաց քսանդարեան տարեգարձին նուելք մը ընելու, քիչ մը տեղեկու-  
թիւն տալ նոյն ցեղին սկզբնաւորութեանը, մեր մէջ թագաւորելուն և վերջին  
վիճակին, անոնց՝ որ ակամայ զուրկ են մնացեր իրենց ազգին պատմութիւնն ալ  
գիտնալէն, բայց եռանդուն սրտով կը միաբանին թէ մեզի և թէ ամէն բարե-  
նպատակ ազգասիրաց հետ՝ երախտեաց և յիշատակաց պարտքն կատարելու ՚ի  
տարեգարձի | ԵՐԿԱԶԱՋԱՐԵԿԻՆ | ԿՐՃԱԿՈՒՆԵԱՑ :

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԽՀԴԴԱՑԻՆ ՄԱՏԵՍՆԳՐՈՒԹԻՒՆ

| Ազգային Հայաստանութիւն :

Բ.

| ԵՐԵ յիշած Հայկական վիպասա-  
նութեանց պէս պէտք է որ ուրիշ շատ  
վիպասանութիւններ ալ երգուած ըլ-  
լան հին Հայաստանին մէջ. բայց ուր  
են հիմայ այնչափ երգերը. բնչ պատ-  
ճառով բոլորն ալ կորան : — | Եկ պատ-  
ճառը աս է որ զրով չէին զրուած շա-  
տը, կամ քիչ օրինակ կար, հապա եր-  
գով ազգէ ազգ կ'անցընէին . անոր հա-  
մար երգը խափանուած ատենը՝ բոլոր  
խափանեցան : | յակ երկրորդ պատճառն  
է՝ աս երգերուն ալ, մնացած հեթա-  
նոսական զրուածներուն ալ խափանիլը.  
| ուսաւորչայ և Տրդատայ հրամաննաւ,  
ազգին ՚ի քրիստոնէութիւն գարձած  
ատենը. որ ըլլայ թէ նորէն հին կրօն-  
քի և հին թոյլ սովորութեանց դառ-  
նան . զիտնալով որ կրօնքի՝ և սովորու-  
թեանց մէջ Հայք շատ կամապաշտ  
են, երգ ալ շատ կը սիրեն . իրաւ այս  
արգելքը մեր գրականութեան մեծ  
վիաս բերաւ, բայց առանց անոր յամառ  
և անկիրթ ժողովրդեան կանոն դնել

էր ըլլար . ինչպէս յայտնի կ'երեւնայ  
անկէ ալ որ երբ թուլնային հաւատքէ՝  
մէկէն իրենց հին աւանդութիւնները  
կը փնտուէին . ինչպէս որ ըրին մեծին  
կ'երսեսէ առաջ Տիրանայ ատեն . “ | Ե-  
,, գերեւալ մաշէին . . . ’ի հնութիւն  
,, հեթանոսութեան սովորութեանց ..  
,, և զիւրեանց երգս առասպելաց զլի ի-  
,, պասանութեանն սիրեցեալք ’ի փոյթ  
,, կրթութեանցն և նմին հաւատա-  
,, ցեալք և ’ի նոյն հանապազորդեալք . ”  
| Կանկ ալ յաջորդ գարուն մէջ երբոր  
| ասակ կը ջանար քրիստոնէութիւնը  
վերցընել Հայաստանէն՝ գարձեալ մնա-  
ցած հին երգերը դուրս հանել սկսաւ .  
“ | Քաղցրացուցանէր ումանց զկարգ  
,, երաժշտութեան և զիրգս հեթա-  
,, նոսականս ” , | Ուերես այսպիսի  
հակառակատէր հոգւոյ ջանքը աւելի  
պատճառ եղաւ որ այն մնացորդներէն  
ալ գտածնին ջնջեն | Ա արդանանք և  
| և ոնդեանք : | Տսկ Հայաստան Պար-  
սից վտանգէն անցնելէն ետև, ալ  
կրօնքին մէջ հաստատուեցաւ, վախ  
չկար վիպասանութիւններէն . բայց ե-  
կունայէ որ ամքողջ զրած վիպասանու-  
թիւն մ'ալ չկար, վասն զի Պարսիկ-  
ներն ալ ջանացին Հայաստանի մէջ գը-  
տած զբերնին ջնջել . սակայն որով  
հետև գեռ տեղ կը լսուէին անսնց  
մէ երգեր, մանաւանդ Պաղթնեաց կող-  
մը, ինչպէս լորենացիէն բերած վը-

1 Բուգ. Դ. ժ. :

2 Եղիշ. Դ. :